

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ձեռագրի իրավունքով

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ

ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ (ԴՐՈ) ԿՅԱՆՔՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1905-1920ԹԹ.

Մասնագիտությունը - Է.00.01 Հայոց պատմություն

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 1996

Աշխատանքը կատարվել է Երևանի Պետական Համալսարանի
Հայոց պատմության ամբիոնում

Գիտական ղեկավար ԶՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԽՈՒՐՇՈՒՂՅԱՆ Լ. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԿՐԱՊԵՏՅԱՆ Հ.

պատմական գիտությունների
թեկնածու
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է "10" XII 1996 թ.
ժամը "13" ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004 հայոց
պատմության մասնագիտական խորհրդի նիստում 375019, Երևան-19, Մարշալ
Բաղդասյան 24-գ

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության
ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրը առաքված է "___" _____ 1996 թ.

Մասնագիտացված խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու

Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ



ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Իր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը
հայրենի հողը, ապրելու իրավունքն ու ազատությունը պաշտպանելու
համար անհաշիվ անգամ հարկադրված է եղել ապավինել զենքի ուժին:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում կորցնելով իր
պետականությունն ու անկախությունը հայ ժողովուրդը չհանդուրժելով
օտար բռնատիրության իշխանությունն ու կապանքները, բազմիցս
պարզել է ազգային-ազատագրական պայքարի դրոշմը: Սկսած հայ
պատմագրության «ոսկե դարից» 5-րդ դարից, մեր պատմիչները,
պատմաբանները, գրականության եւ արվեստի գործիչներն իրենց
ստեղծագործություններում պարբերաբար անդրադարձել են հայության
հերոսական ժամանակահատվածների՝ ազգային ազատագրական
պայքարի առավել ուշագրավ եւ նշանակալի դեպքերի պատկերմանն ու
լուսաբանմանը: Պատմական տարբեր ժամանակաշրջանների դեպքերի ու
իրադարձությունների լուսաբանմանը զուգընթաց բազում հեղինակների
ստեղծագործություններում արժանիորեն պատշաճ ուշադրության են
արժանացել այնպիսի նշանավոր անհատներ, որոնք իրենց անբասիր ու
հայրենամուկ գործունեությամբ նշանավորել ու հարստացրել են մեր
ժողովրդի պատմության հերոսական էջերը:

Հայ ժողովրդի պատմության առավել ուշագրավ, պայքարի
դրամատիզմով, խիզախումներով ու հաղթանակներով, ինչպես նաեւ
ողբերգական ընթացքով հազեցված ժամանակաշրջաններից է 19-րդ
դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայության մղած ազգային-
ազատագրական պայքարը, որի համակողմանի, գիտական
ուսումնասիրության ու արժեքիորման վերաբերյալ հայրենի
պատմագիտությունը դեռեւս իր ամբողջական խոսքը չի ասել:

Պատմական հիշյալ ժամանակաշրջանի իրադարձություններին
ու դեպքերին նվիրված գրականության եւ սկզբնաղբյուրների
ուսումնասիրությունն աներկբայորեն ապացուցում է, որ հայության մղած
ազատագրական պայքարի այդ հատվածում եւս գործել են Հայաստանի
ազատագրումը, կյանքի ու ապրելու գերխնդիր դարձրած,
զոհաբերության պատրաստակամ բազում հայրենամուկ հայորդիներ: Եվ
միանգամայն տրամաբանական է, եթե նշենք, որ առանց այդ
հայրենամուկ անհատների կյանքի ու գործունեության անաչառ
ուսումնասիրության եւ լուսաբանման, չափազանց աղքատիկ ու
անավարտ կլինի ներկայացնել որեւէ պատմական ժամանակաշրջանի
իրական պատկերը, եղելություններն ու օրինաչափությունները: Այս
առումով, անվիճելիորեն կարելու է եւ անհրաժեշտ նաեւ հայ ժողովրդի
բազմադարյան պատմության արժանահիշատակ բաղկացուցիչ մասը
կազմող 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ազգային-
ազատագրական պայքարի նշանավոր գործիչների, որոնց թվում նաեւ
հայոց անկախ պետականության ստեղծման դարբիններից մեկի՝ Դրոյի
(Դրաստամատ Կանայան) կյանքի ու գործունեության անկողմնակալ

լուսաբանումն ու վերաբեկորումը, որը, միաժամանակ, նշանակալի հնարավորություն է ընձեռում համակողմանիորեն արտացոլելու նրա ապրած ժամանակաշրջանի, մասնավորապես Հայաստանի Հանրապետության ստեղծման, հաստատման իրական պատկերն ու մանրամասները:

Դրոյի կյանքին ու գործունեությանը, եւ ընդհանրապես, 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայության ազգային-ազատագրական պայքարին, Հայաստանի Հանրապետությանը նվիրված աշխատություններն ու սկզբնաղբյուրներն արժանվույնս գնահատելիս, անհրաժեշտ է տարբերակել արտերկրում հրատարակված գրականությունը եւ մինչ այժմ պահպանված սկզբնաղբյուրի նշանակությունը ունեցող նյութերը (ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում, «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունը պահպանվում է 33 Ղաշնակցության եւ Հայաստանի Հանրապետության արխիվները - Հ.Գ.) եւ հայրենական պատմագրության շրջանակներում հրատարակված ուսումնասիրությունները: Պատմական հիշյալ ժամանակաշրջանի, ազգային-քաղաքական կուսակցությունների ու առանձին գործիչների, մասնավորապես Դրոյի, գործունեության վերաբերյալ անհամեմատ հարուստ, արժեքավոր գրականություն է հրատարակվել, առավելապես հուշագրությունների տեսքով, սփյուռքահայ պատմագրության մեջ, որն էլ միանգամայն օրինաչափ է եւ հասկանալի: Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո, այդ նույն ժամանակաշրջանի բազմաթիվ գործիչներ հարկադրված թողնելով հայրենիքը՝ տարագրության տարիներին գրել ու հիմնականում «Հայրենիք», «Վեմ» ամսագրերում կամ առանձին գրքերով հրատարակել են իրենց հուշագրությունները: Մինչեւ 1985թ.-ը այդ ժամանակաշրջանին նվիրված ուսումնասիրությունները միանշանակորեն ապացուցում են, որ ի տարբերություն սփյուռքահայ, հայրենական պատմագրության մեջ հսկայական բաց տեղեր եւ չնշակված ու չուսումնասիրված, իսկ երբեմն էլ նույնիսկ միտումնավոր կերպով խեղաթյուրված, հորինված էջեր կան: Այս պարագայում նաեւ վճռորոշ էր ժամանակաշրջանի գործունե ու յուրահատկությունը, կոմունիստական վարչակազմի տիրապետության պայմաններում գիտության եւ մշակույթի ոլորտում տիրապետող գաղափարախոսության ու գրաքննության ուժը, առանց որի համաձայնության եւ թույլտվության հնարավոր չէր հրատարակել ոչ միայն որեւէ նշանակալի աշխատություն, գիրք, այլ նաեւ նույնիսկ գրքույկ ու հոդված: Այդ առումով ներկա ատենախոսությունը հայրենական պատմագիտության մեջ իր նախորդը չունեցող ուսումնասիրություն է, մի համեստ փորձ՝ լուսաբանելու եւ արժեկոչելու մայիսի 28-ի մեր անկախ պետականության կերտողներից մեկի՝ Դրոյի (Դրաստամատ Կանայան) կյանքի եւ գործունեության առավել ուշագրավ ու արժանահիշատակ մարտական ուղին:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների,

վկայությունների ու մի շարք աշխատությունների ուսումնասիրությամբ բացահայտել եւ ամբողջական պատկերացում տալ հայ ժողովրդի ազատագրության պայքարի նվիրյալներից առավել նշանավորներից մեկի՝ Դրոյի կյանքն ու գործունեությունը եւ դրանով իսկ նաեւ հերքել խորհրդահայ պատմագրության մեջ նրան վերագրված, բայց իրականում նրա անձի հետ որեւէ կապ եւ առնչություն չունեցող, մտացածին հորինվածքներն ու տեսակետները:

Նրա կյանքին ու գործունեությանը նվիրված ներկա ատենախոսությունում Դրոն գլխավորապես ներկայացվում է որպես ռազմական գործիչ եւ այդ պատճառով առավելապես ուշադրություն ենք դարձրել նրա հրամանատարությամբ մղված կռիվների, ճակատամարտերի նկարագրության ու նշանակության գնահատմանը:

Ամփոփելի փաստ է, որ Դրոն եղել է նաեւ քաղաքական գործիչ, մասնավորապես Հայաստանի Հանրապետության գոյատևման վերջին շրջանում, երբ նա որպես զինվորական նախարար, հանրապետության կառավարության հանձնարարությամբ ղեկավարում էր Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչ Լեզրանի հետ տարվող բանակցությունները եւ ղեկտեմբերի 2-ին իշխանությունը բուլշեվիկներին հանձնելու պահից, որպես ժամանակավոր իշխանության ներկայացուցիչ եւ գլխավոր հրամանատար, պետք է իր համաձայնությունը տար նույն օրերին Ալեքսանդրապոլում ընթացող հայ-թուրքական բանակցություններում կնքելու հայ-թուրքական համաձայնագիրը: Նրա գործունեությունում աննախադեպ, ողջ հայության համար բախտորոշ եւ չափազանց պատասխանատու պահ էր: Այդ ժամանակ մեծապես նաեւ Դրոյի ընդունած վճիռներից, վճռականությունից ու հաստատականությունից էր կախված Հայաստանի եւ հայ ժողովրդի հետագա ճակատագիրն ու ապագան: Նույն օրերին նրա ընդունած ծայրահեղ ու ոչ հավասարակշռված, ժամանակի ոգուց ու հնարավորություններից չբխող վճիռները միանշանակորեն կարող էին ծայրագույն եւ անկանխատեսելի հետեւանքներ ունենալ ողջ հայության գոյության վրա:

Արժանվույնս գնահատելով տվյալ ժամանակահատվածում վերոհիշյալ հարցերի կարեւորությունն ու նրբությունները կարծում ենք, որ Դրոյի կյանքի ու գործունեության այդ շրջանն արժանի է համակողմանի եւ առանձին ուսումնասիրության, որը նաեւ հնարավորություն կընձեռի հայ ժողովրդի պատմագրության մեջ նրան ներկայացնելու որպես քաղաքական գործիչ՝ իր կատարած դերով ու նշանակությամբ:

Ներկա ուսումնասիրության մեջ տեղ չի գտել նաեւ տարագրության տարիներին նրա գործունեությունը:

Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ, այն այսօր էլ ունի նշանակալի պատմա-քաղաքական, բարոյական ու դաստիարակչական նշանակություն:

1. Նրա գործունեության ամենարժանահիշատակ ու նշանակալի շրջանը Հայաստանի Հանրապետության ստեղծման եւ գոյատևման երկուսուկես ամյա ժամանակահատվածն է, երբ նա այդ

ժամանակաշրջանի մյուս նշանավոր գործիչների՝ Արամ Մանուկյանի, Ավ.Ահարոնյանի, գեներալներ Նազարբեկյանի, Սիլիկյանի եւ այլոց ընկերակցությամբ իր մեծագույն ավանդը ներդրեց հայոց անդրանիկ հանրապետության կերտման գործում: Այս իմաստով կարելի է անվերապահորեն պնդել, որ նրա կյանքի ու գործունեության ուսումնասիրությունն ու իմացությունը լայն հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել եւ պատշաճ գաղափար կազմել Հայոց անկախ պետականության վերստեղծմանը նախորդած տարիներին ու Հայաստանի Հանրապետության գոյատեւման ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական երեւոյթներին, դեպքերին ու դեմքերին:

2. Լինելով իր ժամանակի նշանավոր անհատներից մեկը՝ Դրոն, այնուամենայնիվ ՀՀ Դաշնակցության անդամ էր եւ իր գործունեությունում առաջնորդվել է հենց այդ կուսակցության առաջադրած խնդիրներով, որոշումներով ու հանձնարարություններով: Այս առումով Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունն ավելի է ամբողջականացնում ու հարստացնում ՀՀ Դաշնակցության պատմության էջերը:

3. Դրոյի կյանքի ու գործունեության, հետեւաբար պատմական այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների անաչառ վերլուծությունն ու արժեվորումը, իրավամբ կարող է ներկա եւ ապագա սերունդներին դրական հնարավորություն ընձեռել, հաշվի առնելով պատմության դասերը՝ կատարել ժամանակի ոգուց ու հնարավորություններից բխող եւ ժողովրդի շահերին համապատասխանող եզրահանգումներ ու խելամիտ քայլեր:

4. Այսօր, երբ հայ ժողովուրդը, Քրիստափոր Միքայելյանի դիպուկ բնորոշմամբ դարձյալ «հարատեւ կռվով» պետք է պաշտպանի իր հայրենիքի նախկինում բռնադատված, բայց այժմ ազատագրված, հատվածներից մեկի՝ Արցախի եւ արցախահայության անձեռնմխելիությունը եւ ազատ ապրելու իրավունքը, մեր ազգային հերոսներին պատշաճորեն ժողովրդին ներկայացնելը ձեռք է բերում նաեւ դաստիարակչական ու բարոյական մեծ նշանակություն եւ արժեք: Հարկ է նշել, որ հայ ազգային հերոսներից արցախյան ազատամարտիկներին մարտադաշտում առավելապես ոգեշնչողներից մեկը Դրոյի կերպարն է, եւ պատահական չէ, որ ազատամարտիկների ամենասիրված մարտական երգերից մեկը, նույնիսկ ամենադժվարին ու օրհասական պահին եղել եւ մնում է հենց Դրոյին ձոնված երգը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից եւ հինգ գլուխներից: Ներածությունում համառոտակի շարադրված է թեմայի՝ Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրության եւ լուսաբանման արդիականությունը, նպատակը, խնդիրներն ու նշականությունը: Նույն բաժնում տրված է նաեւ Դրոյի ապրած ժամանակաշրջանին, նրա կյանքի ու գործունեությանը նվիրված մի շարք աշխատությունների, սկզբնաղբյուրների գնահատականը:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է գլխավորապես 1905-1920 թվականները, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության հաստատման, նրան նախորդած տարիներին

Հայաստանի արեւմտյան եւ արեւելյան հատվածներում տեղի ունեցած պատմական այն իրադարձությունների շարադրանքը, վերլուծությունն ու արժեվորումը, որոնք անմիջականորեն առնչվում են Դրոյի գործունեությանը:

ԳԼ. ԱՌԱՋԻՆ. «1905-1906ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍՈՒՄ: ԱՅԱՐԵԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԻՆԵՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆ:

1905-1906թթ. հայ ժողովրդի պատմության այն կարեւորագույն ժամանակահատվածներից է, երբ Հայաստանի արեւելյան հատվածի հայությունն ապավինելով միմիայն սեփական ուժերին հարկադրված էր զանգվածային ինքնապաշտպանությամբ, զենքի զորությամբ պաշտպանելու իր ապրելու եւ գոյատեւելու իրավունքները: Պանթուրքիզմի գաղափարներով ու նպատակներով առաջնորդվող կովկասյան թուրքերն, օգտվելով ռուսական իշխանությունների թողտվությունից, խրախուսանքից, հայկական ջարդեր են սանձազերծում Կովկասում՝ պանթուրքիզմի կենտրոն Բաքվում եւ վաղօրոք մշակված ծրագրով, այն տարածում երեւանի նահանգ, Անդրկովկասյան գրեթե բոլոր հայաբնակ շրջաններ:

Անդրադառնալով հայ-թուրքական կռիվների պատճառների լուսաբանմանը՝ ուսումնասիրության առաջին գլխում շարադրված է Նիկոլ Դումանի գլխավորած հայկական մարտական ջոկատի, որի կազմում էր նաեւ Դրոն, բացառիկ վճռական դերը Բաքվի կոտորածները կանխելու եւ թուրք վերնախավի հայակործան ծրագրերի տապալման գործում: Նրա մարտական կենսագրությունը սկզբնավորվում է հենց 1905թ.-ի Բաքվի դեպքերի ժամանակից, երբ 20-ամյա Դրոն, թողնելով զինվորական ուսումն ու ծառայությունը մեկնում է մարտադաշտ, իրեն նվիրաբերելու ծանրագույն իրավիճակում հայտնված արյունակիցների պաշտպանությանը: Բաքվի դեպքերի ժամանակահատվածում նրա մարտական կենսագրության կարեւորագույն իրադարձությունը, անկասկած, Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեի ահաբեկումն է: Գեներալ Նակաշիձեն հայկական ջարդերի կազմակերպման պատճառով ՀՀ Դաշնակցության Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեի վճռով դատապարտված էր մահվան: Հայկական ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Դրոն հմտորեն է իրագործում նահանգապետի ահաբեկումը: Նրա նետած ռումբի հարվածով Բաքվի հրապարակներից մեկում, օրը ցերեկով, գետին է տապալվում բեկորներից մահացու խոցված Նակաշիձեն (1): Այդ ահաբեկումը, որը ժամանակին մեծ արձագանք գտավ բովանդակ Կովկասում, ունեցավ իր նշանակալի դերն ու ազդեցությունը հայկական ինքնապաշտպանական զորախմբերի բարոյական, մարտական ոգին բարձրացնելու եւ հակառակորդի սանձարժանկությունների ու բռնության, կողոպուտի նկատմամբ ունեցած անհագուրդ մոլուցքը սանձելու գործում:

ժամանակաշրջանի մյուս նշանավոր գործիչների՝ Արամ Մանուկյանի, Ավ.Ահարոնյանի, գեներալներ Նազարբեկյանի, Սիլիկյանի եւ այլոց ընկերակցությամբ իր մեծագույն ավանդը ներդրեց հայոց անդրանիկ հանրապետության կերտման գործում: Այս իմաստով կարելի է անվերապահորեն պնդել, որ նրա կյանքի ու գործունեության ուսումնասիրությունն ու իմացությունը լայն հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել եւ պատշաճ գաղափար կազմել Հայոց անկախ պետականության վերստեղծմանը նախորդած տարիներին ու Հայաստանի Հանրապետության գոյատևման ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական երեւոյթներին, դեպքերին ու դեմքերին:

2. Լինելով իր ժամանակի նշանավոր անհատներից մեկը՝ Դրոն, այնուամենայնիվ ՀՀ Դաշնակցության անդամ էր եւ իր գործունեությունում առաջնորդվել է հենց այդ կուսակցության առաջադրած խնդիրներով, որոշումներով ու հանձնարարություններով: Այս առումով Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունն ավելի է ամբողջականացնում ու հարստացնում ՀՀ Դաշնակցության պատմության էջերը:

3. Դրոյի կյանքի ու գործունեության, հետեւաբար պատմական այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների անաչառ վերլուծությունն ու արժեվորումը, իրավամբ կարող է ներկա եւ ապագա սերունդներին դրական հնարավորություն ընձեռել, հաշվի առնելով պատմության դասերը՝ կատարել ժամանակի ոգուց ու հնարավորություններից բխող եւ ժողովրդի շահերին համապատասխանող եզրահանգումներ ու խելամիտ քայլեր:

4. Այսօր, երբ հայ ժողովուրդը, Քրիստափոր Միքայելյանի դիպուկ բնորոշմամբ դարձյալ «հարատեւ կռվով» պետք է պաշտպանի իր հայրենիքի նախկինում բռնադատված, բայց այժմ ազատագրված, հատվածներից մեկի՝ Արցախի եւ արցախահայության անձեռնմխելիությունը եւ ազատ ապրելու իրավունքը, մեր ազգային հերոսներին պատշաճորեն ժողովրդին ներկայացնելը ձեռք է բերում նաեւ դաստիարակչական ու բարոյական մեծ նշանակություն եւ արժեք: Հարկ է նշել, որ հայ ազգային հերոսներից արցախյան ազատամարտիկներին մարտադաշտում առավելապես ոգեշնչողներից մեկը Դրոյի կերպարն է, եւ պատահական չէ, որ ազատամարտիկների ամենասիրված մարտական երգերից մեկը, նույնիսկ ամենադժվարին ու օրհասական պահին եղել եւ մնում է հենց Դրոյին ձոնված երգը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից եւ հինգ գլուխներից: Ներածությունում համառոտակի շարադրված է թեմայի՝ Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրության եւ լուսաբանման արդիականությունը, նպատակը, խնդիրներն ու նշանակությունը: Նույն բաժնում տրված է նաեւ Դրոյի ապրած ժամանակաշրջանին, նրա կյանքի ու գործունեությանը նվիրված մի շարք աշխատությունների, սկզբնաղբյուրների գնահատականը:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է գլխավորապես 1905-1920 թվականները, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության հաստատման, նրան նախորդած տարիներին

Հայաստանի արեւմտյան եւ արեւելյան հատվածներում տեղի ունեցած պատմական այն իրադարձությունների շարադրանքը, վերլուծությունն ու արժեվորումը, որոնք անմիջականորեն առնչվում են Դրոյի գործունեությանը:

ԳԼ. ՍՈՍԶԻՆ. «1905-1906ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍՈՒՄ: ԱՅԱԲԵԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԻՆԵՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆ:

1905-1906թթ. հայ ժողովրդի պատմության այն կարեւորագույն ժամանակահատվածներից է, երբ Հայաստանի արեւելյան հատվածի հայությունն ապավինելով միմիայն սեփական ուժերին հարկադրված էր զանգվածային ինքնապաշտպանությամբ, զենքի զորությամբ պաշտպանելու իր ապրելու եւ գոյատևելու իրավունքները: Պանթուրքիզմի գաղափարներով ու նպատակներով առաջնորդվող կովկասյան թուրքերն, օգտվելով ռուսական իշխանությունների թողտվությունից, խրախուսանքից, հայկական ջարդեր են սանձազերծում Կովկասում՝ պանթուրքիզմի կենտրոն Բաքվում եւ վաղօրոք մշակված ծրագրով, այն տարածում երեւանի նահանգ, Անդրկովկասյան գրեթե բոլոր հայաբնակ շրջաններ:

Անդրադառնալով հայ-թուրքական կռիվների պատճառների լուսաբանմանը՝ ուսումնասիրության առաջին գլխում շարադրված է Նիկոլ Դումանի գլխավորած հայկական մարտական ջոկատի, որի կազմում էր նաեւ Դրոն, բացառիկ վճռական դերը Բաքվի կոտորածները կանխելու եւ թուրք վերնախավի հայակործան ծրագրերի տապալման գործում: Նրա մարտական կենսագրությունը սկզբնավորվում է հենց 1905թ.-ի Բաքվի դեպքերի ժամանակից, երբ 20-ամյա Դրոն, թողնելով զինվորական ուսումն ու ծառայությունը մեկնում է մարտադաշտ, իրեն նվիրաբերելու ծանրագույն իրավիճակում հայտնված արյունակիցների պաշտպանությանը: Բաքվի դեպքերի ժամանակահատվածում նրա մարտական կենսագրության կարեւորագույն իրադարձությունը, անկասկած, Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձենի ահաբեկումն է: Գեներալ Նակաշիձեն հայկական ջարդերի կազմակերպման պատճառով ՀՀ Դաշնակցության Բաքվի «Ոսկանպատ» կենտրոնական կոմիտեի վճռով դատապարտված էր մահվան: Հայկական ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Դրոն հմտորեն է իրագործում նահանգապետի ահաբեկումը: Նրա նետած ռումբի հարվածով Բաքվի հրապարակներից մեկում, օրը ցերեկով, գետին է տապալվում բեկորներից մահացու խոցված Նակաշիձեն (1): Այդ ահաբեկումը, որը ժամանակին մեծ արձագանք գտավ բովանդակ Կովկասում, ունեցավ իր նշանակալի դերն ու ազդեցությունը հայկական ինքնապաշտպանական զորախմբերի բարոյական, մարտական ոգին բարձրացնելու եւ հակառակորդի սանձարժանկությունների ու բռնության, կողոպուտի նկատմամբ ունեցած անհագուրդ մոլուցքը սանձելու գործում:

Բաքվի դեպքերից հետո Դրոն գալիս է Երեւանի նահանգ եւ Նիկոլ Դրոնի համեմարարությամբ կազմակերպում է ու գլխավորում ուտայքի շրջանի մարտական ուժերը, այնուհետեւ տեղափոխվում է Եռնային Նախիջեւան, ապա Դարալազյազ ու Ջանգեզուր, որտեղ իր ղրծուն մասնակցությունն է բերում հիշյալ շրջանների նքնապաշտպանության կազմակերպման ու ղեկավարման գործում: Իրեն երկու տարի գտնվելով ամենաշիկացած մարտական րադարձությունների կիզակետում Դրոն փայլուն քննություն է բռնում, րպես մարտական զորախմբերի ամենաերիտասարդ ու տաղանդավոր րամանատար:

Իրավամբ կարելի է պնդել, որ նա արդեն մեծ անուն վաստակած շանավոր հայդուկ-ռազմիկների Նիկոլ Դրոնի, Սեբաստացի Սուրադի, Եռու (Արշակ Գաֆաֆյան), Դաճի Դակոբ Կոտոյանի, Առյուծ Ավագի եւ այլոց առաջնորդությամբ ու ընկերակցությամբ մասնակցելով բազմաթիվ մարտական գործողությունների, ձեռք է բերում մարտական կոփվածք եւ ղործառույթուն:

Անդրադառնալով հայ-թուրքական կռիվների մանրամասներին ու նահատանը, ուսումնասիրության մեջ զարգացվում է այն միտքը, որ վատմական տվյալ ժամանակաշրջանում անգնահատելի է ԴԶ լաշնակցության նշանավոր հայդուկ-ռազմիկների, որոնց շարքերում էր նաեւ Դրոն, գլխավորած հայկական մարտական ուժերի ներդրած առաջնություններն ու ավանդը պանթուրքիզմի շնչով վարակված ովկասյան թուրքերի հայակոծման ծրագրերի ձախողման եւ արեւելահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Առիթիվ հայկական ինքնապաշտպանական ուժերի հերոսական ղործողությունների, փլուզվում են ոչ միայն թուրք վերնախավի, այլեւ հայության նկատմամբ ծրագրված ցարիզմի նպատակները եւս: Միթե՞ արական իշխանությունները կարող էին հանդուրժել իրենց ծրագրերի ղապվման «մեղսագործներին»: Ցարական ոսիկանության ջանքերով ԴԶ րաշնակցության հարյուրավոր անդամներ ու համակիրներ երբեք կալվում են: Դրոն խուսափելով ոստիկանության հետապնդումներից, Սուրեն Էֆենդի կեղծանվամբ, հաստատվում է Դին Բայազետում եւ զբաղվում վաճառականությամբ: Այդ տարիներին նա արողանում է որոշ քանակությամբ զենք, զինամթերք հասցնել ասպուրականի, Շատախի, Դուրան-Բարձրավանդակի մարտական րազմակերպություններին եւ իր համեստ ավանդը ներդնել այդ շրջանների ինքնապաշտպանության կազմակերպման սխառանքներում (2):

ԳԼ. ԵՐԿՐՈՐԴ. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ:
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸԱՐԺՈՒՄՆԵՐ, ԴՐՈՆ ՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ
ՁՈՐԱԽՄԲԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ:

Այս գլխում շարադրված է 1-ին համաշխարհային պատերազմի ետեւանքով հայկական չորս, մասնավորապես 2-րդ զորախմբի, րազմավորման պատճառների, ռուս-թուրքական ռազմաճակատի

տարբեր հատվածներում նրա հերոսական գործողությունների եւ 1915թ.-ի ցեղասպանության հետեւանքով փրկված հայության վերջին բեկորների փրկության գործում Դրոյի դրսեւորած նշանակալի ծառայությունները:

Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես՝ Դրոն, խուսափելով, այս անգամ արդեն թուրքական ոստիկանության հետապնդումից մեկնում է Կովկաս, ուր հայության շրջանում սկսվել էր ծավալվել կամավորական շարժումը: Գալիք 1-ին համաշխարհային պատերազմը եւ համայն Ռուսիայի ինքնակալ Նիկոլայ 2-րդի, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի «Հայաստանն ազատագրելու» խոստումները պարարտ հող էին նախապատրաստել կամավորական շարժման համար: Կամավորական շարժմանը մեծապես նպաստում էր նաեւ տարիներ շարունակ հայության նկատմամբ թուրք իշխանությունների վարած դժոխային քաղաքականությունը, որն ատելության եւ պայքարի այնպիսի շիկացած տրամադրություններ էր արմատավորել, որոնք կարող էին ժայթքել առաջին իսկ հնարավորության դեպքում: Ռուսական իշխանություններն անշուշտ քաջատեղյակ էին հայ-թուրքական փոխհարաբերություններին եւ հայ ժողովրդի հոգեբանությանն ու ձգտումներին: Պատրաստվելով պատերազմի ցարիզմը հմտորեն օգտագործեց հայության հակաթուրքական տրամադրություններն ի շահ ռուսական ռուսական զենքի հաղթանակի:

Կամավորների շարքերում զգալի տեղ էին գրավում արեւմտահայերը, որոնք ոչ միայն շատ լավ գիտեին ռուս-թուրքական ռազմաճակատի տեղանքը, այլեւ տիրապետում էին թուրքերեն, քրդերեն լեզուներին: Կամավորների այդ առավելությունները ռուսական հրամանատարության համար ռազմավարական եւ մարտավարական խնդիրներ լուծելիս առաջին հերթին անհրաժեշտ էր ծառայեցնել հետախուզության եւ տեղանքի ուսումնասիրության նպատակներով:

Ռուսական հրամանատարության որոշմամբ հայկական կամավորական զորախմբերը պետք է գործեին հարձակման չորս հիմնական (Սարիղամիշ, Ալաշկերտ, Իգդիր-Մակու-Բայազետ-Վան, Ջուլֆա-Խոյ-Դիլման-Վան) ուղղություններում եւ այդ պատճառով էլ արտոնվեց կազմավորել հայկական կամավորական չորս զորախումբ, որոնցից յուրաքանչյուրը պետք է գործեր նախանշված ուղղություններից որեւէ մեկում:

Հայոց ազգային Բյուրոյի երաշխավորությամբ եւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության որոշմամբ Դրոն նշանակվում է 2-րդ զորախմբի հրամանատար, իսկ կամավորների շարքերում էին այնպիսի հարուստ մարտական կենսագրություն ունեցող համբավավոր հայդուկ-ռազմիկներ, որպիսիք էին Սեպուհը, Սմբատ Բորոյանը, Խեչոն, Կայծակ Առաքելը, Ավոն եւ այլոք: Այդ ընտրությունը միանգամայն ճիշտ էր, ինչը եւ ապացուցեց ժամանակը:

Դրոյի 2-րդ կամավորականը կազմավորվել է նրա հայրենի Իգդիրում: Ձորախմբի հարյուրյակների հրամանատարներն առանց բացառության 1905-1906թթ. հայ-թուրքական ընդհարումներում մարտական նշանակալի դպրոց անցած քաջավարժ զինվորականներ էին, որոնք այդ տարիներին Դրոյի զինակցությամբ մարտնչել էին

Հայաստանի տարբեր շրջաններում եւ քաջ ծանոթ էին միմյանց անձնական որակներին եւ կարողություններին:

Հայկական կամավորական զորախմբերից 1-ինը 1914թ. հոկտեմբերի 24-ին ռազմաճակատ է մեկնում Դրոյի 2-րդ կամավորականը, որը գործելով գեներալ Նիկոլաեւի զորաջոկատի կազմում, պետք է անցներ Հայկական պար լեռնաշղթան եւ հաղթահարելով այդ շրջաններում ամրացված դիմադրությունը՝ հարձակումը զարգացներ դեպի Վան:

Մեծ ոգեւորւթյամբ սկսելով հարձակումը եւ արագորեն անցնելով Հայկական պարն ու հաղթահարելով այդ տարածքի մի շարք բարձրույններում ամրացված հակառակորդի դիմադրությունը՝ կամավորները պատերազմի հենց սկզբնական շրջանի առաջին օրերում հանդիպում են առաջին անակնկալին: 2-րդ կամավորականը դեռ նոր էր հասցրել ամրանալ Կավրե-Շամե գյուղում, երբ անսպասելիորեն ստանում է գեներալ Նիկոլաեւի կողմից տրված նահանջելու հրամանը:

Ռուսական հրամանատարության այդօրինակ պահվածքը զարմանք է հարուցել օր առաջ Վանի հայությանը օգնության ձգտող կամավորների շրջանում: Դրոն վճռում է չկատարել գեներալ Նիկոլաեւի հրամանը եւ ճակատամարտ տալ իր զորախմբին բազմիցս գերակշռող հակառակորդի ուժերին՝ դրանով նաեւ հույսեր փայփայելով, որ իրենց հաջող գործողությամբ կարող էին ոգեւորել ռուսական զորքերին եւ փոխել նրանց նահանջելու տրամադրությունները: Ամբողջ օրը, մինչեւ մութն ընկնելը, անկուտում պաշտպանությամբ դիմադրելով 2-րդ կամավորականը հետ է մղում թշնամու մեկը մյուսին հաջորդող զրոհները: Մշտապես մարտադաշտի ամենաթեժ կետերում գտնվող եւ այդ օրը հրամանատարական փայլուն վարպետությունը դրսեւորած Դրոն ճակատամարտի ավարտին ծանր վիրավորվում է եւ ուշակորույս վիճակում տեղափոխվում է Իգդիր, ապա Թիֆլիսի Արամյան հիվանդանոց (3):

Պատերազմի առաջին ամսիներին ընթացող գործողություններն ակնհայտորեն ցույց տվեցին, որ իզուր էին այն հույսերը, թե ռուսական բանակը հայ կամավորականների համագործակցությամբ ի գործու է մի քանի շաբաթների ընթացքում ջախջախել թուրքական զորքերին եւ ազատագրել Արեւմտահայաստանը:

Մարտական գործողություններին զուգահեռ Արեւմտահայաստանի տարածքում իրագործվող ողբերգական դեպքերի զարգացման ընթացքն ապացուցեց, որ «ազատարար» ռուսական բանակը ոչինչ չձեռնարկեց, իսկ հայկական կամավորական զորախմբերը չկարողացան խոչնդոտել ողջ Արեւմտահայաստանը եւ Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերը ջարդերի սարսափազդու տեսարանների վերածող թուրքերի հրեշավոր գործողությունները: Անխուսափելի կոտորածներից փրկվելու նպատակով հայությունն Արեւմտահայաստանի մի շարք բնակավայրերում դիմել էր ինքնապաշտպանության: Օրվա կարեւորագույն խնդիրն ինքնապաշտպանության դիմած շրջաններին օր առաջ օգնության հասնելն էր: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր միավորել հայկական բոլոր մարտական ուժերը եւ այն կենտրոնացնել

առավել կարեւորություն ներկայացնող ուղղություններում, որպիսին համարվում էին Վան-Մուշ, Վան-Բաղեշ ուղղությունները: Խանասորի Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ կազմավորվում է «Արարատյան ջոկատ» զորագունդը, որը համաձայն հրամանատարության ~~վերջին~~ որոշման պետք է գործեր Իգդիր-Բերկրի-Վան-Շատախ-Մուկս, ապա նաեւ Ոստան-Սորբ-Տարոն-Սասուն ուղղությամբ: Անդրանիկի 1-ին կամավորականը գործելու էր Սալմաստ-Դիլման-Վան ուղղությամբ:

Ապաքինվելուց հետո 1915թ. փետրվարին Դրոն վերադառնում է մարտաշարք եւ վերստին ստանձնում 2-րդ կամավորականի հրամանատարությունը: Ապրիլի կեսերին զորախումբը Երեւանից անցնում է Իգդիր, որտեղից էլ ստանում է օգնություն փութալու հարցով Վանից ուղարկված Արամի գրությունը: Վանի հայությունը ջարդերից ազատվելու նպատակով պարզել էր ինքնապաշտպանության դրոշը եւ անխորտակ պաշտպանությամբ ջախջախելով թուրքական զորքերի զրոհները, օր-օրի սպասում էր ռուսական զորքերի ու հայ կամավորների օգնությանը: Նույնիսկ փոքր-ինչ հապաղումը կարող էր կործանարար ազդեցություն ունենալ Վանի հայության համար: Արամի գրությունը ստանալուն պես Արարատյան զորախումբը, որի կազմում էր նաեւ 2-րդ կամավորականը, անմիջապես ճանապարհվում է դեպի Վան:

Դրոյի գլխավորած զորախումբը գործելով գլխավոր ուղղության սուր ծայրում՝ ապրիլի 16-ին հասնում է Բերկրի-Կալա եւ չնայած բնակիչմայական ծանր պայմանների խոչնդոտներին՝ արագորեն գրավում է քաղաքը եւ չսպասելով գեներալ Նիկոլաեւի զորաջոկատի մոտենալուն, հարձակվում է Վան տանող ճանապարհին գտնվող թուրքական բանակի հաջորդ հենակետերի վրա:

Հարկ է նշել, որ ռուսական բանակի հրամանատարության գործողություններում այդ օրերին հարձալ դրսեւորվել է ոչնչով չպատճառաբանված դանդաղկոտությունն ու պասիվությունը, իսկ Վանից ստացվող տագնապալի լուրերը թելադրում էին, որ անհրաժեշտ էր գործել ճիշտ հակառակ ուղղվածությամբ՝ արագ ու վճռական: Հապաղելու դեպքում թուրք հրամանատարությունը կարող էր լավագույնս օգտվել ռուսական զորքերի ու հայ կամավորների պասիվությունից եւ լրացուցիչ ուժեր նետելով Վան ընկճել քաղաքի պաշտպանների դիմադրությունը:

Դրոն որոշում է ի հակակշիռ ռուսական զորքերի դանդաղկոտության խմբի հրամանատարությունը հանձնել իր օգնական Գ.Նոդեհին եւ մի փոքր ջոկատի գլուխ անցած արագորեն շարժվել Վան ու համալրել տեղի ինքնապաշտպանական ուժերի մարտաշարքերը: Սակայն բարեբախտաբար ռուս հրամանատարությունը փոխում է իր նախկին մարտավարությունը եւ Դրոն ստանալով առաջ շարժվելու թույլտվություն՝ արագորեն հաղթահարում մինչեւ Վան ձգվող արգելապատնեշները եւ մայիսի 4-ին առաջինը մտնում Վան: Երկու օր անց Վան են հասնում 3-րդ եւ 4-րդ զորախմբերը, իսկ ապա նաեւ Անդրանիկի 1-ին կամավորականը: Վանի հաղթանակն առաջին ծանրակշիռ հաջողությունն էր: Շնորհիվ հերոսական

ինքնապաշտպանության եւ հայ կամավորների ու ռուսական զորքերի ժամանակին ցուցաբերած օգնության տասնյակ հազարավոր վասպուրականցիներ փրկվեցին վերահաս կոտորածից: Վան մուտք գործելուց ընդամենը 2-3 օր անց՝ չսպասելով ռուսական բանակի հիմնական զորամիավորումների մոտենալուն, Դրոյի զորախումբն առանց հապաղելու շարունակում է հարձակումը եւ օգնության հասնում Շատախի, ապա Մոկսի եւ Ռշտունիքի դարձյալ ինքնապաշտպանության դիմած հայությանը:

Մայիսի 12-ին Դրոն իր զորախմբով հաղթականորեն մուտք է գործում 45 օր հերոսական ինքնապաշտպանությամբ թուրքերի եւ քրդերի հարձակումներին դիմագրաված Շատախ (4), ապա մի շաբաթ անց Մոկսի, Ռշտունիքի գավառներ եւ կամավորական մյուս զորախմբերի համագործակցությամբ ազատագրելով բազմահազար հայերի՝ իր զորախմբի հիմնական ուժերով արշավում է դեպի Տարոն:

Հունիսի վերջերին Դրոյի 2-րդ եւ հայկական մյուս կամավորական զորախմբերը համատեղ ուժերով գրոհում են դեպի Տարոն տանող ճանապարհի առաջին խոչնդոտի՝ Սորբ գյուղաքաղաքի վրա եւ հաղթահարելով թուրքական զորքերի դիմադրությունը, գրավում են նաեւ Դարվան, Ջեյվա բնակավայրերը եւ հասնում մինչեւ Գրգուռի ստորոտում գտնվող Ջրխոր գյուղը, իսկ ապա նշանավոր հայդուկապետ Աղբյուր Սերոբի ծննդավայրը՝ Սողորդ (5):

Կավրե-Շամեի կռվից մինչեւ Բերկրի-Կալա, Վան եւ ապա Շատախի, Մոկսի, Ռշտունիքի, Սորբի ու Դարվանի ազատագրական մարտերում փայլուն քննություն է բռնում հայկական կամավորական զորախմբերի ամենաերիտասարդ հրամանատարը՝ երեսնամյա Դրոն: Անցած բոլոր մարտերում նրա ղեկավարած զորախումբը մշտապես կրակների կիզակետում էր եւ մեծ մասամբ ամենաառաջավոր դիրքերում:

Ռուսական զորքերն ու հայ կամավորները հաղթականորեն մուտք են գործում Տարոն աշխարհի Ախլաթ գավառը, որտեղից նրանց զենքերի համագարկերի արծագանքներն արդեն հասնում էին Սասունի լեռների ամրություններին եւ իրենց բազուկների ուժին ապավինած տասնյակ հազարավոր հայերի, որոնք յուրաքանչյուր ակնթաթ հույսով ու հավատով սպասում էին «ազատարար» ռուսական զորքերի եւ հայ կամավորների օգնությանը:

Դրոն ռուսական հրամանատարությունից վճռականապես պահանջում է անհապաղ զարգացնել հարձակումն ու շարժվել Սասուն, իսկ հայկական զորախմբերի հրամանատարներին առաջարկում մերժման դեպքում կամավորական զորախմբերի ուժարով արշավել Սասուն (6):

Դժբախտաբար, Դրոյի այդ պահանջն ու առաջարկությունը ռուսական զորքերի անսպասելի նահանջի եւ հայ կամավորական զորախմբերի միջեւ առաջացած տարաձայնությունների պատճառով չի իրականանում: Սասունի լեռներում ապաստանած բազմահազար հայերը զրկվելով սպասվելիք օգնությունից եւ սպառելով մարտնչելու վերջին հնարավորություններն ու միջոցները՝ մեծմասամբ զոհ են գնում թուրք ջարդարարների վայրագություններին: Գաղթի ճանապարհին, ռուսական

զորքերի անկազմակերպ նահանջի հետեւանքով զգալի զոհեր է տալիս նաեւ Վասպուրականի, Շատախի, Մոկսի, Ռշտունիքի հայությունը: Նահանջի ժամանակ ստանձնելով գաղթականության քարավանները պաշտպանող վերջապահի դերը դարձյալ իր անբասիր գործողությամբ աչքի է ընկնում Դրոյի զորախումբը: Բերկրի-Կալայի մոտերքում օրհասական պահին, հասնելով մարտադաշտ 2-րդ կամավորական երկու օրուգիշեր, անընդմեջ մարտերով դրսեւորելով մեծագույն դիմացկունություն եւ վճռականություն, կարողանում է ապահովել ռուսական հրամանատարության անկազմակերպվածության հետեւանքով անպաշտպան մնացած գաղթական զանգվածների նահանջը (7):

1916թ.-ի սկզբներին վերախմբավորելով ուժերը՝ ռուսական զորքերը վերսկսում են հարձակումը եւ կարճ ժամանակ անց գրավում Տրապիզոնից մինչեւ երզնկա, Վան, Բաղեշ, Ուրմիա լիճ ընկած տարածքները: Այդ մարտերի ընթացքում դարձյալ գործելով որպես առաջապահ ուժերից մեկը՝ Դրոյի զորախումբը մասնակցում է Խնուսի, Տարոնի, Սասունի եւ Բաղեշի ազատագրման գործողություններին: Անցած բոլոր կռիվներում գործելով ռուսական զորամիավորումների կազմում որպես առաջապահ ուժեր՝ անձնուրաց հերոսականությամբ մարտնչել են բոլոր կամավորական խմբերը, առանց բացառության:

Արեւմտահայաստանի տարածքները գրավելուց հետո կովկասյան ռազմաճակատի հրամանատարության որոշմամբ հայկական կամավորական զորախմբերը լուծարվում են:

ԳԼ. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՏ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ԴՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՍԱՄԱՐՏԸ:

Ռուսումնասիրության 3-րդ գլխում անդրադարձել ենք 1917թ. հեղափոխություններից հետո ռուսական զորքերի հեռանալու հետեւանքով կովկասյան ռազմաքեմում ստեղծված իրավիճակի, հայկական կանոնավոր բանակի (Հայկական բանակային կորպուս) կազմավորման պատճառների, Երեւանի նահանգում եւ կովկասյան ռազմաճակատի տարբեր հատվածներում ընթացող մարտական գործողությունների, Բաշ-Ապարանի ճակատմարտի, Հայաստանի անդրամիկի հանրապետության կերտման մանրամասների եւ այդ ամենում Դրոյի ներդրած ավանդի լուսաբանմանն ու արժեւորմանը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո իրավիճակը Կովկասի քաղաքական կյանքում եւ ռազմաճակատում կտրուկ կերպով փոխվում է:

Ցարիզմի տապալման եւ արեւմտյան ճակատում գերմանական ու ավստրո-հունգարական բանակների կողմից ռուսական զորքերի պարտությունների արձագանքները թափանցելով կովկասյան ռազմաճակատ հայրենիք վերադառնալու ցանկությամբ համակված ռուս զինվորների շրջանում ավելի խորացրին արմատավորված դասակարգությունների տրամադրությունները: Ռուսական զորաբանակներում նախկին մարտունակության եւ ռազմական կարգապահության

փոխարեն արդեն նկատվում էին բարոյալքության եւ ռազմաճակատը կազմավորվելու բացահայտ նշաններ:

Ռազմաճակատի մերկացումը փաստորեն իրական հնարավորություն էր ընծեռում թուրքերին համալրելով բանակի մարտական կազմը, վերստին զավթելու ոչ միայն Արեւմտահայաստանը, այլեւ Անդրկովկասը եւ օգտվելով ռուսական զորքերի բացակայությունից, առանց մեծ ջանքերի, իրականացնելու պանթուրքիզմի ծրագիրը, այն է՝ գրավել Բաքուն եւ դուրս գալ Զյուսիսային Կովկաս, ապա մինչեւ Բաշկիրիա, Թաթարիա ու Միջին Ասիա: Ռազմաճակատը կայունացնելու համար անհրաժեշտ էին միմիայն կարգապահ ռազմական միավորումներ, իսկ այդպիսին կարող էին լինել հայկական մարտական ուժերը, որոնք շահագրգռված էին պաշտպանելու Արեւմտահայաստանն ու Անդրկովկասը:

Կերենսկու ժամանակավոր կառավարությունը համոզված էր, որ ռուսական զորքերի նվաճած տարածքները թուրքերի հարձակումներից կարելի էր ապահովել միայն ազգային զորամասերի ուժերով: Ելնելով վերոհիշյալ նախադրյալներից ժամանակավոր կառավարության թույլտվությամբ կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանն արտոնվեց կազմավորել ազգային զորամիավորումներ, որոնք թվում նաեւ հայկական երկու զորամասեր: 1-ին՝ 60 հազ. թվակազմով բանակային կորպուսը նախատեսված էր կազմավորել ի հաշիվ արեւմտյան ռազմաճակատում մարտնչող հայ զինվորների եւ հայկական կազմավորական զորախմբերի: 2-րդ զորամիավորումը՝ Անդրանիկի գլխավորությամբ բացառապես արեւմտահայերից կազմված աշխարհագորային դիվիզիան՝ 30 հազ. թվակազմով:

Դժբախտաբար հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հայկական զորամիավորումների կազմավորման գործը ձախողվեց:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Լեբեդիսկու համաձայնությամբ այդ ճգնաժամային օրերին հայ ժողովրդի գոյապայքարն առաջնորդող միակ փաստական ուժը Զայոց ազգային խորհուրդը կարողացավ կազմել միայն մեկ 16000-18000 անոց բանակային կորպուսը:

Գեներալ Նազարբեկյանի գլխավորած Ազգային զորամասի մեջ էին մտնում Արեշյանի 1-ին, Սիլիկյանի 2-րդ եւ Անդրանիկի 3-րդ դիվիզիաներն ու գնդապետ Ղորղանյանի գլխավորած հեծյալ բրիգադը:

Զայոց ազգային խորհրդի եւ կովկասյան ռազմաճակատի հրամանատարության փոխհամաձայնությամբ բանակային կորպուսի զինվորական կոմիսարի պաշտոնը վստահվեց Դրոյին: Ցարական նահանգապետերի ահաբեկիչը, հայ-թուրքական ընդհարումներում Կոտայքի, Ագուլիսի, Նախիջեւանի, Ջանգեզուրի ինքնապաշտպանական մարտերի ամենաերիտասարդ խմբապետը եւ ապա կամավորական շարժման ընթացքում զորահրամանատարական փայլուն կարողություններ դրսևորած 33-ամյա Դրոն, գեներալ Նազարբեկյանից հետո, փաստորեն եկրորդ դեմքն էր հայկական նորաստեղծ զորամիավորումում:

Եւ այդչափ պատասխանատու պաշտոնը նրան վստահելը

պատահական չէր, այն համակողմանիորեն հաշվարկված էր եւ մտածված:

1917թ. դեկտեմբերին կովկասյան ռազմաճակատն իրականում այլեւս գոյություն չուներ:

Թուրքերն օգտվելով հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կովկասյան ռազմաճակատի վերջնական փլուզման իրողությունից՝ վերախմբավորում ու համալրում են իրենց զորամասերը եւ անցնում հարձակման:

Սեւ ծովից մինչեւ Պարսկաստան ձգվող հսկայական տարածքը, ուր նախկինում կենտրոնացված էին 300000-անոց զորամիավորումները, այժմ պաշտպանելու էին Վանում, Խնուսում, Ալաշկերտում, Կարինում, Երզնկայում եւ Բաբերդում տեղաբաշխված հայկական փոքրաքանակ զորագնդերը: Զարց է ծագում, կարող էին արդյոք հայկական նոր-նոր կազմավորված զորագնդերը պաշտպանել մի քանի հարյուր կիլոմետր ձգվող հսկայածավալ ռազմաճակատը, մանավանդ, որ այդ օրերին թուրքական զորքերի հարձակմանը զուգընթաց հայկական զորաբանակի մարտաշարքերն ու թիկունքը կազմալուծվելու նպատակով, զենքի էր դիմել Արեւելահայաստանի թուրքաբնակ շրջանների գրեթե ողջ բնակչությունը: Ահա այդ էր այն կարեւորագույն հարցը, որն այդ օրերին դարձել էր Զայոց Ազգային խորհրդի եւ Զայկական բանակային կորպուսի հրամանատարության մտահոգման գլխավոր խնդիրը:

Ելնելով ռազմաճակատում եւ թիկունքում տիրող իրական կացությունից եւ հայկական զորամիավորումների հնարավորությունից՝ Դրոն, շատերի համար անսպասելի, առաջարկում է փոքրացնել, կրճատել ռազմաճակատը եւ եղած մարտական ուժերը կենտրոնացնելով ավելի փոքր հատվածում ստեղծել պաշտպանության առավել հզոր հանգույց: Նրա կարծիքով, քանի որ հայկական փոքրաքանակ զորագնդերով հնարավոր չէր պաշտպանել ռազմաճակատի հսկայածավալ գիծը, ապա անհրաժեշտ է ոչնչացնել Վանի, Մուշի, Երզրումի, Երզնկայի շրջաններում գտնվող բոլոր պահեստները, եւ եղած մարտական ուժերը հետ քաշելով Բայազետ-Բասեն հատվածում՝ անխորտակ պաշտպանությամբ կանգնեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը: Զակառակ պարագայում, գտնում էր Դրոն, Արեւմտահայաստանը կորցնելուց հետո չափազանց դժվար կլիներ պահպանել նաեւ Արեւելահայաստանը (8):

Տվյալ պահին նրա տեսակետը զուտ հոգեբանական, բարոյական առումով դժվար ընկալելի էր եւ զուցե թե ճիշտ չէր հնչում: Իրոք, դժվար էր համակերպվել Արեւմտահայաստանը թողնելու մտքին, սակայն իրական կացության խորն իմացության ու գնահատման եւ սթափ ու առողջ բանականության տեսանկյունից՝ Դրոյի առաջարկը ճիշտ էր, ինչը եւ ապացուցեց ժամանակը:

Ազգային խորհուրդը եւ բանակի հրամանատարությունը որոշում են պահել առկա ռազմաճակատը եւ Անդրանիկին, որն ի դեպ, Երզնկայից Վան, Բիթլիս ձգվող ճակատը պահելու ամենաքերմեռանդ կողմնակիցներից էր, նշանակում են Կարինի ռազմաճակատի հրամանատար:

1918թ. սկզբներին թուրքերն անցնում են հարձակման եւ կատարվում է այն, ինչ կանխատեսում էր Դրոն: Չնայած հերոսական դիմադրությանը՝ հայկական զորագնդերը, չկարողանալով դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին, թողնում են Բաբերդը, Երզնկան, Վանը, Բաղեշը, եւ վերջապես Արեւմտահայաստանի վերջին հենակետը՝ ռազմաստրատեգիական կարեւորագույն նշանակություն ունեցող Կարին հզոր բերդաքաղաքը: Արեւելահայաստան տանող ուղիները բաց էին: Ահավոր սպառնալիք էր կախվել Հայաստանի մնացած փոքրիկ տարածքում հանգրվանած հայության վերջին բեկորների վրա: Ռազմաճակատում վատթարագույն ուղղվածությամբ զարգացող մարտական գործողություններին զուգընթաց քիկուներում շարունակաբար կրկնվող թուրք զինյալ խմբերի ելույթներն իրենց բնակավայրերին էին գամել զենքի ընդունակ հայերին, որոնք Արեւելահայաստանի տարածքում ծայր առած զինված բախումների ճնշման տակ առավելապես մտահոգված էին իրենց գյուղերի եւ ընտանիքների պաշտպանության խնդիրներով: Իսկ ռազմաճակատում, իրենց ընտանիքների ճակատագրով տագնապած, բազմաթիվ զինվորներ լքում էին զորամասերը եւ վերադառնում հարազատ վայրերը: Հայ զինագնդերում ծնունդ առած զանգվածային դասալքումներն ու տիրապետող անկազմակերպ վիճակը կարող էին ամենաողբերգական հետեւանքներն ունենալ:

Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ 1917թ. դեկտեմբերին Երեւան է գալիս Արամ Մանուկյանը եւ տեղում ստեղծելով Երեւանի Ազգային խորհրդի կազմում լայն իրավունքներով օժտված մի մարմին՝ Հատուկ կոմիտե, ձեռնամուխ է լինում Երեւանի նահանգի ծայրահեղ լարված ու անկառավարելի իրավիճակի կարգավորման խնդիրների լուծմանը: Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող պահին Երեւան է գալիս նաեւ հայկական զորքերի զինվորական կոմիսար Դրոն: Այդ օրերին նրա գործունեությունը նպատակաուղղված էր հետեւյալ կարեւորագույն հարցերի կենսագործմանը.

1. Որպես հայկական բանակային կորպուսի զինվորական կոմիսար, նա պետք է իր գործուն մասնակցությունը ունենար ռազմաճակատում ծավալվող մարտական գործողությունների մշակման ու ղեկավարման աշխատանքներին:

2. Որպես Երեւանի նահանգի մահմեդական բնակչության զինված ելույթները «խաղաղեցնելու» նպատակով կազմավորվող զինվորական ուժերի հրամանատար, նա պետք է կազմավորեր նոր զորամիավորումներ եւ վճռական քայլերի դիմելով՝ ջախջախեր Արեւելահայաստանի տարածքում բռնկված մահմեդական հրոսակախմբերի չդադարող զինյալ ելույթները եւ բացեր ռազմաճակատը քիկուներին կապող հաղորդակցության ուղիները:

Երեւանի նահանգում, Արամի համագործակցությամբ, Դրոն անպատմելի ջանքեր է գործադրում ռազմաճակատը կայունացնելու, նոր զորամիավորումներ կազմակերպելու եւ ժողովրդի ու դասալքության տենդով բռնված հայ զինվորների մաշտական ոգին բարձրացնելու

ուղղությամբ: Հայկական զորաբանակի զինվորական կոմիսարը անհրաժեշտության դեպքում մեկնում է ռազմաճակատի ամենառաջավոր բնագծեր եւ անձամբ մարտի առաջնորդում հայ զորագնդերին:

Ահա թե ինչ է վկայում գեներալ Նազարբեկյանը. «... Մարտի 6-ին վերադարձա Սարիղամիշ: Հաջորդ օրը նախագահի (Ավ.Ահարոնյան-Հ.Գ.) գլխավորությամբ ժամանեցին Ազգային խորհրդի մի քանի անդամներ: Նրանց հետ էր նաեւ կորպուսի նախկին զինվորական կոմիսար Դրոն, որը պարզվում է, հրաժարվել էր այդ պարտականությունից եւ ցանկություն էր հայտնել մեկնել ռազմաճակատի առաջավոր գիծ եւ մարտնչել հակառակորդի դեմ...»

Դրոն հենց հաջորդ օրը մեկնել էր առաջավոր զորամաս Ղարաուրգանի ուղղությամբ եւ ստանձնել այդ զորամասի հրամանատարությունը: Կարող եմ համարձակորեն ասել, որ շնորհիվ սպաների ու զինվորների միջավայրում ունեցած իր հեղինակության ու խիզախության, նա կանգնեցրեց հակառակորդի հարձակումն ու մենք կարողացանք ավելի երկար մնալ Սարիղամիշում» (9):

Դրոյին վիճակված չէր երկար մնալ ռազմաճակատում: Թիկունքում մահմեդական հրոսակախմբերի սանձազերծած զինյալ ելույթների հետեւանքով ստեղծված տագնապալի եւ անկառավարելի վիճակը հարկադրում է նրան վերադառնալ Երեւան: Իրավամբ կարելի է պնդել, որ այդ օրերին ռազմաճակատի, հետեւաբար նաեւ հայ ժողովրդի ապագան մեծապես կախված էր նաեւ քիկուներում Արարատյան աշխարհում ծավալվող իրադարձությունների հետագա ընթացքից:

Մահմեդական հրոսակախմբերի հետ «լեզու գտնելու» միակ միջոցը զենքն էր: Կրկնակի անգամ հակառակորդի հետ բանակցելու անհաջող փորձից հետո, փետրվարի 22-ին, Դրոն, իր իսկ նախաձեռնությամբ կազմավորված զորամասի ուժերով (Բաշ-Պառնեցի Մարտիրոսի ու Խոսրով Եղիազարյանի զինավաշտերը, գնդապետ Ջալիմյանի հեծյալ գունդը, պորուչիկ Փիրումյանի, փոխգնդապետ Կորուկովի զորախմբերը եւ գնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական 3-րդ գունդը) գրոհում ու խորտակում է Ուլուխանլու կայարանում ամրացված թշնամու զինյալ խմբերի դիմադրությունը, ապա զարգացնելով հարձակումը եւ ջախջախելով Ջանգիբասարի (Մասիս), Վեդի-Բասարի, Ղամարլուի (Արտաշատ) ու Դավալուի (Արարատ), շրջաններում ամրացված հրոսակախմբերին՝ բացում քիկուները ռազմաճակատին կապող հաղորդակցության ուղիները: Տվյալ ժամանակաշրջանում Դրոյի գլխավորած զորամասի նվաճած հաղթանակներն առաջին ծանրակշիռ հաջողություններն էին, որի շնորհիվ վիճում է հայկական բնակավայրերի վրա մահմեդական հրոսակախմբերի կողմից ձեռնարկվող հարձակումների սպառնալիքը: Հայ զինվորն արդեն չերկյուղելով իր ընտանիքին եւ գյուղին թշնամու զինյալ խմբերի կողմից սպառնացող հարձակումներից՝ արդեն կարող էր հանգիստ խղճով մեկնել ռազմաճակատ:

Դեռեւս Կարսի բերդաքաղաքի եւ Ալեքսանդրապոլի անկումից առաջ, փետրվարի վերջերին, Դրոն հրաժարվում է զինվորական կոմիսարի պարտականություններից եւ ռազմաճակատի ամենաթեմ

կետերում մարտնչելու վճռականությամբ ներկայանում է Երեւանի նահանգի գործող հայկական զորքերի հրամանատար գեներալ Սիլիկյանին. «Ես գնացի Սիլիկյանի մոտ եւ հայտարարեցի, որ այլեւս Հայկական բանակի կոմիսարը չեմ եւ ինձ դրի Սիլիկյանի տրամադրության տակ» (10):

Սիլիկյանի համեմարարությամբ Դրոն մեկնում է Սուրմալուի շրջան եւ Դանիել-Բեկ Փիրումյանից ստանձնում է այդ ուղղությամբ գործող հայկական զորամիավորումների հրամանատարությունը, իսկ չանցած մի քանի օր, երբ Երեւանին արդեն սպառնում էր մեկ այլ մահացու վտանգ, այս անգամ Ապարանի կողմից, նա ընդունում է ռազմաճակատի այդ հատվածում մարտնչող զորքերի հրամանատարությունը:

Բաշ-Ապարանի ճակատում թուրքական զորքերի հայտնվելը սպառնալիք է ստեղծում Երեւանի եւ Արեւելահայաստանի ամենախիտ բնակեցված շրջանի Արարատյան աշխարհի համար, ուր այդ օրերին խմբված էին նաեւ հարյուր հազարավոր գաղթականներ: Երեւան տանող հյուսիս-արեւմտյան դարպասները եւ մայրուղին բաց էին: Այդ ճակատագրական պահին հայկական զորքերի հրամանատարությունը, ճիշտ ժամանակին գնահատելով Ապարանի ուղղությամբ Երեւանին սպառնացող վտանգի կարեւորությունն ու արժեքը կարողանում է խելամիտ քայլերով ձախողել թուրք հրամանատարության ծրագրած գործողությունները:

1918թ. Մայիսյան հերոսամարտերն, ըստ էության, հայության մղած գոյամարտի երեք հիմնական (Սարդարապատ, Ղարաբաղիսա, Բաշ-Ապարան) եւ փոխկապակցված ուղղություններն էին: Նրանցից յուրաքանչյուրի անհաջողությունը կարող էր ողբերգական ազդեցություն գործել հայ ժողովրդի գոյապայքարի վերջնական արդյունքի վրա: Այս առումով, այդ ժամանակահատվածում Բաշ-Ապարանի ճակատամարտն, իր պատմական դերով, ձեռք է բերում արտակարգ կարեւորագույն նշանակություն: Դրոն, զորավարական բարձր վարպետությամբ, ղեկավարելով Բաշ-Ապարանի ճակատամարտում հայկական զորքերի գործողությունները՝ ջախջախում է թուրքական 9-րդ դիվիզիայի հիմնական ուժերը եւ պաշտպանում Երեւանի հյուսիս-արեւմտյան սահմանների անվտանգությունը:

Ահա Մայիսյան հերոսամարտերի Դրոյի գնահատականը. «... Սարդարապատի, Ղարաբաղիսի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերում մեջ իր տարած անօրինական յաղթանակներով՝ հայ ժողովուրդը տիրացաւ ազատ եւ անկախ ապրելու անփոխարինելի բարիքին: Այդ ճակատամարտերն եղան պատճառ, որ տաճիկները հարկադրեցին դաշինք կնքել հայերի հետ եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը» (11):

ԳԼ. ԶՈՐՐՈՐԴ - ԴՐՈՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա. Հայ-վրացական ընդհարումներ
բ. Ղարաբաղ եւ Չանգեզուր

ա. Ենթագլխում քննարկվում եւ լուսաբանվում են Հայաստանի պատմական Լոռի եւ Բորչալու գավառների նկատմամբ վրացական իշխանությունների դրսեւորած զավթողական ձգտումների հետեւանքով ծագած հայ-վրացական կռիվների մանրամասները, ապա նաեւ Չանգեզուրն ու Ղարաբաղը նվաճելու եւ այդ շրջանների հայ բնակչությանը ոչնչացնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունների ծրագրած ձեռնարկումների տապալմանը նպատակաուղղված հայկական մարտական ուժերի իրադրոժած առավել հիշարժան ու նշանակալի գործողությունները:

բ. Ենթագլխում անդրադարձել ենք Ղարաբաղն ու Չանգեզուրը նվաճելու նպատակով Խորիրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի կողմից գործադրված որոշակի միջոցառումների եւ քայլերի էության գնահատմանը:

Վերոհիշյալ հարցերը քննարկելիս տրվում է Դրոյի, որպես ծավալվող իրադարձությունների կենտրոնական դեմքերից մեկի գործունեության նկարագրությունն ու արժեքավորումը:

1918թ. հուլիսի 19-ին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ ժամանում են Երեւան: Անմախսանելի առաքելություն էր վիճակվել իրականացնելու հանրապետության նորընտիր ղեկավարությանը: Մի կողմից երկրում տիրող ծանր կացությունը, բազմահազար գաղթականության սովյալ ու թշվառ վիճակը, մայրաքաղաքից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող թուրքական զորքերը, մուսավաթական Ադրբեջանի դավերն ու Չանգեզուրի, Նախիջեվանի նկատմամբ ունեցած զավթողական հավակնությունները եւ հանկարծ հողային տարածքների առնչությամբ հարեւան քրիստոնյա Վրաստանի հետ բռնկված ընդհարումները:

Անդրկովկասյան ժողովուրդների հայերի, վրացիների եւ ազերիների միջեւ գոյություն ունեցող հողային, սահմանային վեճերը հիմնականում կապված էին Հայաստանի պատմական գավառների Արցախի, Չանգեզուրի, Ախալքալաքի եւ Բորչալուի, իսկ հայ-վրացական ընդհարումների նախօրեին նաեւ Լոռի-Փամբակի տարածքների պատկանելության վիճարկման հետ:

Ինչպես հայտնի է, Արցախի եւ Չանգեզուրի գավառները ցարական կառավարության կողմից մտցվել էին առավելապես մահմեդական հավատքին դավանող բնակչություն ունեցող Ելիզավետպոլի, իսկ Ախալքալաքի ու Բորչալուի գավառները՝ Թիֆլիսի նահանգի կազմի մեջ:

Հայ-վրացական խնդիրների առնչությամբ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ վրաց քաղաքական կուսակցությունները, մինչեւ Անդրկովկասում անկախ հանրապետությունների հաստատումը, այդ հարցերի լուծման վերաբերյալ պաշտպանել են հետեւյալ դիրքորոշումը. «... Սոցիալ-դեմոկրատները (մենշեւիկները) հայտարարել են. «Ինքնակառավարման տերիտորիալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային հարաբերության»

միաժամանակ, հաշվի առնելով այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները: Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվի այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով»: (12)

Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդավարական սկզբունքով լուծելու հարցում հայ եւ վրացական քաղաքական հոսանքների միջեւ այդ ժամանակաշրջանում կար փոխհամաձայնություն: Սակայն 1918թ. մայիսի 26-ի անկախության հռչակագիրն ընդունելուց հետո, Վրաստանի ղեկավարությունը ստանձնած նախկինում ժողովրդավարական սկզբունքով առաջնորդվող սոցիալ-դեմոկրատները

(մենշեիկները), կտրուկ կերպով փոխում են տարածքային հարցերին վերաբերող իրենց իսկ դիրքորոշումը: 1918թ. հունիսին Վրաստանի Հանրապետության ղեկավարությունը հայտարարում է, որ Վրաստանը բացի Ախալքալաքի ու Ղազախի գավառներից, պետք է վերցնի նաեւ Բորչալուն եւ Լոռի-Փամբակը (13):

Վրաստանի կառավարության վերաբերմունքը բավականին հետաքրքիր էր: Ըստ նրա եւ Ադրբեջանի կառավարության նպատակադրության Անդրկովկասի ողջ բնակչության 29%-ը կազմող հայությունը պետք է ամփոփվեր միայն Սեւանա լճի ավազանում եւ Արարատյան դաշտի մի մասում, այսինքն, բավարարվեր ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածքով, որը կազմում էր Անդրկովկասի միայն 5%-ը: Իսկ հայերից փոքր պակաս բնակչություն ունեցող Վրաստանը հավակնում էր Անդրկովկասի ամբողջ տարածքի 40%-ին, այսինքն 8 անգամ ավելի, քան պետք է ունենային հայերը: (14)

Անդրկովկասի մնացած տարածքին հավակնում էր տիրել Ադրբեջանը: Տվյալ ժամանակաշրջանում, ի հաշիվ Հայաստանի պատմական գավառների, Անդրկովկասում երկու հզոր վրացական եւ ադրբեջանական տերություններ ստեղծելու հարցում, մեր հարեւան երկու ժողովուրդների կառավարությունների միջեւ գոյություն ունեին քաղաքական ու տնտեսական շահերի կատարյալ փոխհամաձայնություն եւ ներդաշնակություն:

Գերմանիայի զորակցության խոստումներից թեւավորված վրաց իշխանությունները քաղաքական եւ տնտեսական ինքնուրույն բնագավառ դեռեւս նոր-նոր թեւակոխած Հայաստանի Հանրապետությանը լուրջ մրցակից չէին համարում եւ այդ պատճառով ձգտում էին ամեն գնով կենսագործել հզոր վրացական տերություն ստեղծելու պատեհ առիթն ու հնարավորությունները:

Ավելին, ըստ վրաց կառավարության, սահմանային հարցերն հոգուտ իրենց լուծումն անհրաժեշտ է, քանի որ. «...Հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետեւ այդպիսով յանձին Վրաստանի, Կովկասում կստեղծվի կենսունակ եւ հզոր քրիտոնեայ պետութիւն, որը գերմանացիների աջակցութեամբ կը պաշտպանե եւ հայերին» (15):

Հայ-վրացական հակամարտությունն ավելի է շիկանում, երբ հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին մուտք են

գործում Լոռի, որը մինչ այդ գրավված էր թուրքական զորքերի կողմից: Թուրքական զորքերի կողմից բռնագրավված էր նաեւ Ախալքալաքի գավառը, իսկ Բորչալուի շրջանում տնօրինում էին վրացական զորամասերը: Հայկական զորաբանակի մուտքը հայկական Լոռի վրդովմունք է առաջ բերում Վրաստանի կառավարությունում: Վրաց իշխանությունները, գերմանացիների աջակցությունից խրախուսված հաստատապես վճռել էին զավթել Լոռի-Փամբակը եւ այդ պատճառով վճռականորեն Հայաստանի կառավարությունից պահանջում են զորքերը դուրս բերել այդ գավառից եւ ընդունել բոլոր վիճելի տարածքների նկատմամբ Վրաստանի իրավասությունն ու գերիշխանությունը: Ավելին, վրաց կառավարության որոշմամբ շրջափակվում է Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող Բաթումի-Երեւան երկաթուղին՝ կտրելով մեր երկիրը ստացվող օգնությունից:

Ստեղծված իրավիճակում մնում էր միայն կիրառել մեկ միջոց դիմել զենքի: Դեկտեմբերի 13-ին Դրոն ստանում է Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հանրապետության կառավարության հրամանը: Նրա գլխավորությամբ զորաբանակը, որի շարքերում էին ոչ այնքան լավ հանդերձավորված, բայց մարտական հրաշալի կոփվածք եւ փորձություն ունեցող 5 հազ. մարտիկներ, դեկտեմբերի 13-ից մինչեւ 30-ը, առանց օգնական ուժերի եւ համալրման, ծնունդ խստաշունչ պայմաններում մարտնչելով, փաստորեն Վրաստանի Հանրապետության ողջ ռազմական ուժերի դեմ անընդհատ ընթացող կռիվներում ջախջախում է վրացական զորքերին եւ մաքրում Լոռի-Փամբակի ու Բորչալուի գավառները: Դեկտեմբերի 30-ին, անգլիացիների եւ ֆրանսիացիների միջնորդությամբ Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունները համաձայնվում են դադարեցնել պատերազմը եւ պարտավորվում սահմանային հարցերը լուծել դիվանագիտական ճանապարհով (16):

Հարց է ծագում, ինչպիսի ճակատագրի կարժանանար Լոռի-Փամբակը, եթե Դրոյի զորաբանակին չհաջողվեր զավառը մաքրել վրացական զորքերից: Պատմությունն արդեն տվել եւ տալիս է այդ հարցի միանշանակ պատասխանը: Եթե հայկական զորաբանակին չհաջողվեր Լոռին մաքրել վրաց զորքերից, ապա բացառված չէր, որ այն արժանանար Արցախի ճակատագրին եւ մինչեւ օրս կռվածադիկ կղառնար Հայաստանի եւ Վրաստանի միջեւ:

Ավարտվում է հայ-վրացական պատերազմը: Բացվում է Բաթում-Երեւան երկաթուղին, իսկ Լոռվա գավառը հայտարարվում է չեզոք գոտի: Այս ճանապարհով լուծվում է քրիստոնյա հարեւանի հետ ունեցած վիճելի հարցերը:

Դժվարագույնն ու անլուծելին Ղարաբաղն ու Ջանգեզուրն էին, որոնց նկատմամբ Ադրբեջանի իշխանություններն ավելի ուժգնությամբ էին շարունակում դրսևորել իրենց զավթողական ձգտումները: Այդ հողի վրա Հայաստանի եւ Ադրբեջանի հակամարտությունը գնալով ավելի էր խորանում եւ շիկանում:

Հայաստանի տարածքում թուրքական զորքերի առկայությունը, ապա հարեւան Վրաստանի հետ զինված բախումները, մի փոքր անց

Հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրները եւ երկրի ծայր աստիճան քայքայված տնտեսության վերականգնման դժվարությունները խոչնդոտում էին հանրապետության կառավարությանն առավելագույնս զբաղվելու Ղարաբաղի եւ Չանգեզուրի հարցով: 1919թ. վերջերին Հայաստանի կառավարությունը փոքր-ինչ հնարավորություն է ստանում ուշադրությունը կենտրոնացնելու Ղարաբաղի եւ Չանգեզուրի վրա: Ղարաբաղի եւ Չանգեզուրի խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով հանրապետության կառավարությունը Չանգեզուր է ուղարկում Դրոյին, որի հրամանատարության տակ պիտի գործեին այդ գավառների ողջ զինված ուժերը:

Դժվար չէր հասկանալ, որ եթե հանրապետության զորքերը մուտք գործեին Ղարաբաղ, ապա բացառված չէր պատերազմական գործողությունների բռնկում, այս անգամ արդեն մյուս հարեւանի՝ Ադրբեջանի հետ, որի զավթողական մտադրությունները Ղարաբաղի նկատմամբ հայտնի էին: Իսկ Հայաստանի իրական կացությունը դեռեւս հանրապետության կառավարությանը չէր թույլատրում այդօրինակ քաղաքականություն կենսագործելու:

Որպեսզի զենքի ուժով հնարավոր լիներ վերջնականապես լուծել Ղարաբաղի հարցը, նախ պետք էր ինչպես հարկն է կազմակերպել Չանգեզուրի մարտական ուժերը: Երկրորդ. մեկնդմիշտ լուծել Չանգեզուրի մահմեդական բնակչության հարցը: Արդեն բազմիցս ապացուցվել էր, որ Չանգեզուրի հայությունը ոչնչացնելու գործում տեղի թրքությունը թուրքիայի, իսկ տվյալ ժամանակահատվածում նաեւ Ադրբեջանի հուսալի պատվարն էր ու դաշնակիցը:

Երրորդ. հարկավոր էր Չանգեզուրում կենտրոնացնել զենքի ու զինամթերքի, հանդերձանքի ու պարենի բավարար պաշարներ: Չորրորդ. հաստատել հուսալի կապ Չանգեզուրի եւ Ղարաբաղի միջեւ, որպեսզի Ադրբեջանի հետ ընդհարումներ սկսվելու դեպքում հնարավոր լիներ այդ ամենը անխափան կերպով տեղափոխել Ղարաբաղ:

Մինչ այդ ամենի իրագործումն անհրաժեշտ էր որոշակի քայլեր ձեռնարկել նաեւ Ղարաբաղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար:

«Դրոն ուղարկում է Ղարաբաղ Կ.Աթայեանին, սասունցի Մուշեղին եւ ռոտմիստր Տեր-Մարտիրոսեանին, կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը տեղական ընկերների հետ միասին, մինչեւ որ ստեղծվեն քաղաքական նպաստավոր պայմաններ, որոնց յետոյ վերջնականապես զենքի ուժով Ղարաբաղը կմիացվի Հայաստանին» (17):

1920թ. հունվարի 6-ին սկսվում է Չանգեզուրը թուրք բնակչությունից վերջնականապես մաքրելու գործողությունը: Ընդամենը մեկ օրում, Գարեգին Նժդեհի, Յապոնի, Արտեմ Խանգադյանի եւ մյուս հրամանատարների գլխավորած զանգեզուրյան մարտական ուժերը, Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ ազատելով ողջ Չանգեզուրը թուրքերից հասնում են մինչեւ Հագարա գետը (18):

Ադրբեջանական իշխանությունների համար մեծ հարված է այն հազարավոր մահմեդականների կորուստը, որոնց զինական

աջակցությամբ հույս ունեին լուծելու Չանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու խնդիրը: Ադրբեջանի կառավարությունը տենդագին պատրաստություն է տեսնում Չանգեզուրում կորցրած արյունակից դաշնակիցների փոխվրժել լուծելու Ղարաբաղցիներից:

Ավարտելով Չանգեզուրը մահմեդականներից մաքրելու գործունեությունը, Դրոն մեկնում է Երեւան, որպեսզի կառավարության հետ կարգավորի Ղարաբաղին օգնություն ցույց տալու հետ կապված հարցերը: Սակայն մինչեւ կհասցնեւ ավարտել գործերը՝ ազերի բազմահազարանոց բանակը մարտի 26-ին տարբեր ուղղություններից ներխուժում է Արցախի տարածք: Գերմարդկային ջանքերի գնով արցախցիները դիմադրում եւ հաղթանակներ էր տանում ազերի կանոնավոր բանակի դեմ:

Ապրիլի 15-ին Դրոն իր զորամասով մտնում է Արցախի տարածք եւ դուրս վճռելով արցախցիների կողմից ջարդված ադրբեջանական զորամասերին իր ձեռքն է վերցնում գավառի ողջ իշխանությունը: Նրա զորամասի կազմում էին իր վաղեմի զենքի ընկերները՝ Գարեգին Նժդեհը՝ Ղափանի զորախմբով եւ բաշգառնեցի Մարտիրոսն ու Կուռո թաթխանյանը: Չանգեզուր-Արցախ կապն ու հաղորդակցության ուղիների պահպանությունը հանձնարարվում է Յապոնին:

Տվյալ ժամանակահատվածում Դրոյի զորամասի մուտքը Արցախ, խիստ անհրաժեշտ էր: Դժվար չէր գուշակել, թե ինչպիսի հրեշավոր վայրագություններ կարող էին գործել ադրբեջանական զորքերը, եթե արցախահայությանը սպառնացող վտանգին, թեկուզեւ ուշացումով, օգնության չհասնեին Հանրապետության զորքերը:

Կարճ ժամանակահատվածում Դրոյի հրամանատարությամբ կազմակերպվում է ավելի քան 3000 թվակազմով զորագումը: Արցախի տարբեր շրջանների, ինչպես նաեւ Չանգեզուրի միջև ստեղծվում է հեռախոսային հուսալի կապ:

Դրոն հայտարարվում է Արցախ-Չանգեզուրի գլխավոր նահանգապետ-հրամանատար: Նրա մասնակցությամբ արցախահայության ընտրյալ ներկայացուցիչները ապրիլի 28-ին գումարում են 9-րդ համաժողովը եւ մեկ անգամ եւս վճռականորեն հայտարարում Հայաստանին վերամիավորվելու որոշումը:

Կարծես թե դժվարություններն արդեն ետեւում էին մնացել, սակայն իրականում ամենասարսափելին դեռեւս առջեւում էր:

Մուսավաթական Ադրբեջանի հանրապետությունը հռչակում է Խորիրդային Ադրբեջան: Չանգած մեկ օր՝ Խորիրդային Ադրբեջանի ակառվարությունը վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությունը, պահանջելով հայ զինական ուժերը դուրս բերել Արցախից եւ Չանգեզուրից, հակառակ դեպքում սպառնում պատերազմով: «Միջազգային իմպերիալիզմի» դեմ պայքարող «համաշխարհային հեղափոխություն» իրականացնող Խորիրդային Ռուսաստանը եւ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալը հանուն իրենց քաղաքական շահերի՝ խորիրդայնացման միջոցով «զոհաբերեցին» Ադրբեջանական անկախ հանրապետությունը: «Համաշխարհային հեղափոխության» դրոշակակիր

Խորհրդային Ռուսաստանը՝ առաջնորդվելով արեւելքի ժողովուրդներին «իմպերիալիզմի լծից ազատելու» եւ նրանց խորհրդայնացնելու շինծու լոզունգներով, ձգտում էր իր գերիշխանությունը հաստատել արեւելքի ժողովուրդների վրա: Խորհրդային իշխանության «մարդասիրական» նպատակների կենսագործման գլխավոր խոչնդոտը «միջազգային իմպերիալիզմն» էր: Մերձավոր եւ միջին արեւելքում իր գերիշխանությունը հաստատելու համար Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ էր դաշնակից ու հենարան: Հանձին իրեն «կարմիր հեղափոխական» հորջորջող Սուստաֆա Քեմալի, որի պայքարի սլաքը նույնպես ուղղված էր «միջազգային իմպերիալիզմի» դեմ, Ռուսաստանը գտավ իր հուսալի ու «գաղափարակից» դաշնակցին: Երկուսի շահերն էլ փոխադարձաբար ներդաշնակվում էին: Խորհրդային Ռուսաստանին «խորհրդայնացման նպատակով» անհրաժեշտ էր անմիջական հաղորդակցության ուղիներ, կապեր ստեղծել արեւելքի երկրների եւ մասնավորապես իր նոր դաշնակից՝ Թուրքիայի հետ: Կովկասյան անկախ հանրապետությունները անջրպետում էին Ռուսաստանից Թուրքիային եւ մյուս երկրներին, իսկ նրանց քաղաքական շահերը պահանջում էին վերացնել այդ անջրպետները: Ադրբեջանի հարցը լուծվեց խորհրդայնացման ճանապարհով: Սակայն Հայաստանը, եւ հատկապես Արցախը, Ձանգեզուրն ու Նախիջեւանը սեպածեւ խրվելով արդեն Խորհրդային Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ, փաստորեն գլխավոր խոչնդոտներն էին «համաշխարհային հեղափոխության» իրականացման ճանապարհին: Անհրաժեշտ էր վերացնել այդ սեպը եւ անմիջական կապ ստեղծելով Խ.Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ ճանապարհ բացել դեպի արեւելք: Խորհրդային ճանապարհով Արցախը, Ձանգեզուրն ու Նախիջեւանը, եւ իհարկե «իմպերիալիստական Հայաստանը (այդպես էին որակել Հայաստանի Հանրապետությունը Քեմալ փաշան եւ նույն տարվա սեպտեմբերին Բաքվում կայացած Արեւելքի ժողովուրդների համագումարը) նվաճել տվյալ պարագայում դեպի արեւելք ճանապարհի հարթելու ամենահարմար միջոցն էր: Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով մայիսի 1-ին Ադրբեջանի տարածքում գտնվող 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը Օրջոնիկիձեի, Կիրովի ստորագրությամբ խորհրդային իշխանության անունից պատերազմ հայտարարելու սպառնալիքով նոր վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը եւ առանց պատասխանի սպասելու կարմիր բանակի զորագնդերը շարժում Արցախ: Պահանջում են Դրոյի հայ գինական ուժերը դուրս բերել Արցախի տարածքից: Եթե չընդունվեն կարմիր բանակի պահանջները, ապա հանրապետությունը ստիպված կլինի պատերազմել ոչ միայն «խորհրդային» մուսավաթի, այլեւ հենց խորհրդային Ռուսաստանի դեմ, բացի դրանից խորհրդային իշխանության հետ բանակցությունները վարելու առաքելությամբ Մոսկվա ուղեվորդող Լեւոն Շանթի պատվիրակությունն արդեն ճանապարհին էր եւ Հայաստանի կառավարությունը հույս ուներ բանակցություններ վարել հյուսիսի մեծ տերության հետ:

Մայիսի 5-ին Դրոյի հետ բանակցելու համար Արցախ են ժամանում Ս.Օրջոնիկիձեի ներկայացուցիչները՝ Սահակ Տեր-

Գաբրիելյանը եւ Լեւանդովսկին ու խորհրդային իշխանության անունից պահանջում հայկական զորքերը դուրս բերել Ղարաբաղի տարածքից եւ անցնել Ձանգեզուր:

- Ես զինուորական եմ, ես կը սպասեմ իմ կառավարութեան իրահանգին, այդ կըլլա իմն թէ նոր,- լինում է Դրոյի պատասխանը:

Այն ժամանակ Օրջոնիկիձեի ներկայացուցիչներն առաջարկում են Վարիչների Խորհրդի իշխանութիւնը տարածել միայն Վարանդայի եւ Դիզակի վրայ:

Դրոն միեւնոյն պատասխանն է տալիս» (19):

Խորհրդային զորքերն առանց Արցախի օրինական իշխանության (Վարիչների Խորհրդի) եւ Դրոյի համաձայնության արդեն մինչեւ մայիսի 20-ը մուտք են գործում Արցախի մի շարք շրջաններ եւ ամենուրեք հաստատում խորհրդային կարգեր: Արցախը գրավելու ամենահարմար եւ «անարյուն», «մարդասիրական» միջոցը տեղի բնակչությանը շլացուցիչ խոստումներով ու կեղծ գաղափարներով խաբելն էր: Իսկ «խաղաղություն», «հավասարություն», «եղբայրություն» սին կարգախոսներով առաջնորդվող բոլշեւիկներին դժվար չէր մոլորեցնել ադրբեջանական զորքի մշտական սպառնալիքի տակ ապրող եւ իրենց բազմամյա պայքարով դեռեւս բաղձալի նպատակին չհասած արցախցիներին:

Խորհրդային կոմիսարները ճիշտ էին հասկացել ժամանակի նրբությունները: Արցախի նվաճման լավագույն երաշխիքը նրա խորհրդայնացումն էր: Խորհրդայնացման ալիքը արագորեն տարածվում էր Արցախի բնակչության շրջանում: Հայ բոլշեւիկների ջանքերով բազմաթիվ գյուղեր հոժարական ընդունում էին խորհրդային իշխանությունը:

Ստեղծված իրավիճակում Դրոն այլընտրանք չուներ, կամ պետք է զենքի ուժով հարկադրել կարմիր բանակին թողնել Ղարաբաղի տարածքը, որը միանշանակորեն նշանակում էր պատերազմական գործողություններ սկսել Խորհրդային Ռուսաստանի դեմ, կամ չխոչնդոտել կարմիր բանակին Ղարաբաղի խորհրդայնացման գործում, որն էլ հավասարազոր էր համակերպվել Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու իրողությանը:

Ատենախոսությունում անդադարձել ենք այն իրական պատճառներին, որոնց հարկադրանքով Դրոն ստիպված եղավ իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնել բոլշեւիկներին եւ անցնել Ձանգեզուր:

Կարիմր բանակի զորամասերը խորհրդայնացման ճանապարհով գրավելով Արցախը, մուտք են գործում Ձանգեզուր ու փորձում տեղի բոլշեւիկյան կազմակերպությունների աջակցությամբ եւ զենքի ուժով նվաճել նաեւ Ձանգեզուրը (20):

Ռուսումնասիրության մեջ անդրադարձել ենք խորհրդային զորքերի դեմ Դրոյի զորմասի մղած մի շարք կռիվներին, որոնք շարունակվել են մինչեւ 1920թ. օգոստոսի 10-ը: Այդ օրը Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջեւ Օհիֆիսում կնքվում է մի համաձայնագիր, ըստ որի դադարեցվելու

էին ոչ միայն պատերազմական գործողությունները, այլեւ կարմիր բանակի զորամիավորումները, որպէս խաղաղարար ուժեր, պետք է տեղաբաշխվէին Ղարաբաղում, Ձանգեզուրում եւ Նախիջեւանում:

ԳԼ. ԴԻՆԳԵՐՈՐԴ - ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ: ԴՐՈՆ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՈՒՋԱՄԱԾԱԿԱՏԱՍԻՐՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ:

Հինգերորդ գլխում քննարկվում են Բուլշեիկյան Ռուսաստանի համաձայնությամբ Հայաստանի դեմ թուրքիայի սանձազերծած պատերազմի, Սուրմալուի ռազմաճակատում Դրոնի գլխավորած զորքերի հաղթական ճակատամարտի եւ հանրապետության պարտությանն ու խորհրդայնացման վերաբերվող հարցերը:

Կարմիր բանակի կողմից Արցախի գրավումով ու Ձանգեզուրի վրա ձեռնարկած հարձակումներով իրականում արդեն դրվել էր խորհրդային իշխանության կողմից «համաշխարհային հեղափոխությանն» արգելափակող Հայաստանի Հանրապետության նվաճման հիմնաքարը: Թուրքական զորքերի հարձակումով հանրապետությունը հայտնվում է Հայաստանի անկախությունը կորցնելու եւ այն բռնազավթելու դիտավորությամբ հյուսիսից ու հարավից տեղացող հարվածների աքցանում: Բուլշեիկյան Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի փոխհամաձայնությամբ իրականացվող գործողությանը ճանապարհ էր հարթելու Հայաստանում գործող հայ բուլշեիկները, որոնք հայկական զորաբանակի եւ բնակչության շրջանում ծավալած քայքայիչ գործունեությամբ հող նախապատրաստեցին հայոց անկախ պետականության կործանմանը:

1920թ. սեպտեմբերի առաջին օրերից սկսած պարբերաբար բախումներ էին տեղի ունենում հայկական սահմանապահ զորքերի եւ հանրապետության սահմանների տարածքային անձեռնմխելիությունը հաճախակի խախտող թուրքական զորամասերի միջեւ, իսկ սեպտեմբերի 23-ին թուրքական կորպուսը Քեդախի Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան:

Հայ-թուրքական տասնյակ կիլոմետր ձգվող ռազմաճակատում մարտերը ծավալվում էին հիմնականում երկու ուղղությամբ՝ Օլթի-Կարս եւ Սուրմալու: Հայկական բանակի գլխավոր հրամանատարությունը՝ ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից, ռազմական ուժերը գլխավորապես կենտրոնացնում է հենց այդ ուղղություններում, ընդսնին առավելագույն ուշադրություն է կենտրոնացնում Կարսի ճակատի վրա:

Չնայած այն հանգամանքին, որ հայկական բանակի գլխավոր հրամանատարությունը Կարսի ճակատն էր ընդունում որպես գլխավոր ուղղություն, այնուամենայնիվ, Սուրմալուն իր ռազմաստարտեգիական դիրքով պակաս կարեւոր նշանակություն չունէր: Եթե թուրքական զորքերին հաջողվեր խորտակել Սուրմալուի ռազմաճակատի հայկական զորամասերի դիմադրությունը, ապա նրանք կարող էին հաջողությամբ գետնանցել Արաքսը եւ հաշված ժամերի ընթացքում հայտնվել Արարատյան դաշտում եւ Երեւանում: Իսկ դեպքերի այդօրինակ

զարգացումն անխուսափելիորեն հարցականի տակ կդնէր Հանրապետության, գոյությունը:

Երկրորդ. Սուրմալուն, ի տարբերություն մյուս ուղղության, հազեցված չէր այնպիսի ռազմական պաշտպանողականությամբ, որպիսին, հանձինս հզոր բերդաքաղաքի, ուներ Կարսի ռազմաճակատը: Կարսի ռազմաճակատի պաշտպանները կարող էին ապավինել բերդաքաղաքի հարյուրավոր հրանոթներին, գնդացիրների հզոր կրակի եւ մեծաքանակ ռազմամթերքի աջակցությամբ:

Դրոն՝ գերազանց գիտակցելով Սուրմալուի ռազմաճակատի դժվարությունները ու նրա դերը հանրապետության պաշտպանության ու գոյատևման գործում, հայկական բանակի հրամանատարությունից պահանջում է իրեն վստահել այդ ուղղությամբ գործող զորքերի հրամանատարությունը:

Ուսումնասիրության մեջ անդրադառնալով Դրոնի մղած վերջին Սուրմալուի ճակատամարտի առավել ուշագրավ դրվագների նկարագրությանը, այն միտքն է զարգացվում, որ այդ ճակատամարտը, իր հաղթական ավարտով, անգնահատելի նշանակություն ունեցավ մայրաքաղաքի եւ Արարատյան դաշտի հայության գոյապահպանման գործում (21):

Չնայած նրա անզուգական հրամանատարությամբ Սուրմալուի ռազմաճակատում ձեռք բերած փայլուն հաղթանակին, դժբախտաբար Հայաստանի Հանրապետությունն արդեն պարտվել էր: Կարսի ռազմաճակատն, ի տարբերություն Սուրմալուի, ունենալով պաշտպանվելու հզոր միջոցներ, չկարողացավ ինչպես հարկն է դիմագրավել թուրքական զորքերի հարձակումներին: Չանցած մի քանի օր Կարսի բախտին է արժանանում Ալեքսանդրապոլը: Հայկական զորքերը նահանջում են Ալեքսանդրապոլից հյուսիս-արեւելք՝ Ջաջուռ եւ հարավ-արեւելք՝ Ադին կայարանի ուղղությամբ:

Ալեքսանդրապոլի անկումից հետո թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար հանրապետության կառավարությունը հարկադրված սկսում է զինադադարի բանակցություններ Կարաբեքիր փաշայի հետ:

Նոյեմբերի 23-ին հրաժարական է տալիս հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանի կաբինետը եւ ընտրվում է նոր կառավարության Սիմոն Վրացյանի գլխավորությամբ:

Դրոն նորընտիր կառավարության կազմում ստանձնում է զինվորական նախարարի պաշտոնը:

Հայաստանի կառավարության հանձնարարությամբ թուրքական զորքերի հրամանատարության հետ բանակացություններ վարելու համար Ալեքսանդրապոլ է մեկնում Ալ.Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը (22):

Իսկ դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանը Հայաստանի վերջին վարչապետ Վրացյանին ներկայացրեց խորհրդային իշխանության վերջնագիրը. այն է՝ հանրապետության իշխանությունը հանձնել բուլշեիկներին: Մարտունակ բանակն արդեն զորություն չունէր, իսկ հանրապետության զգալի մասը նվաճված էր.

կառավարությանն ուրիշ ոչինչ չէր մնում անելու, բացի իշխանությունը բոլշեիկներին հանձնելուց:

Այսպիսով, կենսագործվեց Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացման ճանապարհով նվաճելու վաղորդք ծրագրված ու մշակված քաղաքականությունը:

1. Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 1956թ., ապրիլի 22,
2. Տե՛ս «Հայրենիք» ամս., 1941թ. համ. 6, էջ 162, «Ռոստոմ» 1979թ., էջ 188,
3. «Անմահ Դրոյի (Դրաստամատ Կանայան) պայծառ հիշատակին», «Ալիք», Թեհրան, 1956թ., մայիսի 4, էջ 73-85,
4. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց.1, գ.1, ք.6,
5. Տե՛ս Նույն տեղում, ք.6,
6. Ս.Վրացեան, «Կեանքի ուղիներով», հ. Դ, Պէյրուք, 1965թ. էջ 172,
7. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ.45, ց.1, գ.21, ք.42-43,
8. Ս.Վրացեան, «Կեանքի ուղիներով», հ. Դ, Պէյրուք, 1965թ. էջ 179-180,
9. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992թ., համ. 3, էջ 86,
10. «Հայրենիք» օրաթերթ, 1956թ., ապրիլի 28,
11. «Հայաստանի Հանրապետության 60-ամեակը 1918-1978թ.», 1978թ., էջ 5
12. ՀՀԴ ԿԱ «Հայ Յեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Արխիվ», Բոստոն, 65/1, էջ 12,
13. Նույն տեղում, էջ 15,
14. Նույն տեղում, էջ 18,
15. Ս.Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Թեհրան, 1982թ., էջ 206,
16. Նույն տեղում, էջ 220-230,
17. ՀՀԿԱ (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Արխիվ), Բոստոն, Ս.Վ., 8-13,
18. Տե՛ս ԱԼՈ, «Նժդեհ», Պէյրուք, 1968թ., էջ 480-482,
19. «Հայրենիք» ամս., 1923թ., հոկտեմբեր, էջ 126
20. Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1978թ., 1 (50), էջ 40-41, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ.441, ք.156,
21. «Յառաջ», 1920թ. նոյեմբերի 17,
22. Ալեքսանդրապոլի հայ-թուրք եւ երեւանի հայ-ռուս բանակցությունների, Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման մանրամասները շարադրված են Ալ.Խատիսյանի «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» եւ Ս.Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գորքերում:

Ատենախոսության ընդհանուր դրույթները շարադրված են հեղինակի Համլետ Գեւորգյան «Դրո» Երեւան, 1991թ. գորքում:

Геворкян Гамлет Мартикович

Жизнь и деятельность Дро (Драстамата Канаяна) 1905-20 гг.

Резюме

Данная диссертация - первое в отечественной историографии научное исследование, в котором сделана попытка всесторонне рассмотреть и проанализировать жизнь и деятельность одного из виднейших представителей национально-освободительной борьбы армянского народа - Дро (Драстамата Канаяна).

Деятельность Дро началась в тот период, когда армяне Восточной Армении своей героической самообороной под общим руководством АРФ Дашнакцутюн сумели свести на нет армяноненавистнические намерения кавказских турок, вооруженных идеями пантюркизма и покровительствуемых царскими властями. В 1905-06 гг., сражаясь плечом к плечу с такими видными бойцами-повстанцами, как Никол Думан, Себастьян Мурад, Кери (Аршак Гафаян) и другие, двадцатилетний Дро прошел суровую школу воинского искусства и приобрел не только опыт, но и необходимые знания. Это позволило ему уже в начале первой мировой войны возглавить одну из четырех дружин армянских добровольцев и, приняв участие во многих кровопролитных боях, внести весомый вклад в дело спасения десятков тысяч армян Восточной Армении, Шатаха, Сасуна, Рштуника и Тарона.

Опираясь на многочисленные источники и свидетельства очевидцев, автор диссертации анализирует героическую деятельность возглавляемых Дро армянских соединений в армяно-турецкой войне 1918 года, в частности в Баш-Апаранской битве, а также дает оценку роли и значению Дро в создании и становлении первой Армянской республики.

По воле судьбы, за два с половиной года существования своей независимой республики, армянский народ был вынужден противостоять захватническим планам ближайших соседей, которые, пользуясь тяжелым положением новосозданного государства, попытались отторгнуть от него исторические территории Армении - Лори-Памбак, Зангезур и Карабах. Войска, руководимые Дро, и в этих боевых операциях также проявили себя с наилучшей стороны.

Впоследствии, в результате русско-турецкого соглашения 1920 г., территория Армянской республики была захвачена и поделена между Россией и Турцией. В этих условиях Дро был вынужден покинуть Армению и до конца своих дней жить вдали от Родины.